Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

2018 թվականի փետրվարի 26-ից 28-ը քաղաք Բարսելոնա գործուղման վերաբերյալ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

  Վահան Մարտիրոսյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Իսպանիայի Թագավորություն՝ քաղաք Բարսելոնա, 2018թ. փետրվարի 26-ից 28-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  <<GSMA բջջային աշխարհ 2018>>

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն GSMA շարժական աշխարհ համաշխարհային համաժողովի նախարարական ամենամյա ծրագրին:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վ. Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@mtcit.am

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

2018թ. փետրվարի 26-ից մարտի 1-ը ք. Բարսելոնայում տեղի է ունեցել GSMA շարժական աշխարհ համաշխարհային համաժողովը, որի շրջանակներում կայացած 2018թ. փետրվարի 26-ից 28-ը նախարարական ամենամյա ծրագրին մասնակցել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը:

Նշված հանդիպումը հանդիսանում է բջջային կապի օպերատորների և կապի ոլորտը կարգավորող նախարարների ամենամեծ միջոցառումը:

Նախարարական հանդիպման ընթացքում համապատասխան ոլորտի նախարարները, կազմակերպությունների ղեկավարները, կարգավորողները և քաղաքականություն մշակողները քննարկել են շարժական կապի ոլորտի առջև ծառացած մարտահրավերներն ու հնարավորությունները:

GSMA շարժական աշխարհ համաշխարհային համաժողովին ներկա են գտնվել ավելի քան 2000 մասնակից, այդ թվում՝ 140 երկիր և 40-ից ավել միջազգային կազմակերպություն ներկայացնող պատվիրակություններ, ներկայացուցիչներ կառավարություններից, ինչպես նաև աշխարհի ամենաազդեցիկ հեռահաղորդակցության առաջնորդներ:

«GSMA բջջային աշխարհ 2018»-ին իր տաղավարն է ունեցել նաև հայկական արտադրության «Զանգի» հավելվածը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանն այցելել է «Զանգի» հավելվածի տաղավար, ծանոթացել ընկերության առաջարկած նորություններին:

Ընկերությունը միջոցառման ընթացքում ներկայացրել է հեռահաղորդակցության նորարար լուծումներն ու հնարավորությունները iOS, Android, Desktop, վեբ ծրագրերում:

2018 թվականի Նախարարական ծրագիրը լայն հնարավորություն է ընձեռել շարժական կապի ոլորտի առաջավոր միջոցառման ընթացքում փոխգործակցելու հանրային և մասնավոր հատվածների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ, ինչպես նաև ուսումնասիրելու առաջավոր տեխնոլոգիաներն ու մասնակցություն ցուցաբերելու ցուցահանդեսներին:

Համաժողովի շրջանակներում քննարկվել են մի շարք կարևոր հարցեր՝ կապված կառավարությունների կողմից բջջային կապի ոլորտի զարգացման, ոլորտի հատուկ կարգավորման հիմնախնդիրների, ինչպես նաև ոլորտի զարգացման համար ներդրումների աջակցման հետ:

Հանդիպման ընթացքում մասնակիցներին ներկայացվել են ոլորտի առաջնային նորամուծությունները, դրանց կիրառման համար անհրաժեշտ պայմանները:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիների նախարար Վահան Մարտիրոսյանը փետրվարի 27-ին հանդիպել է «ZTE» (Zhong Xing Telecommunication Equipment Company Limited) ընկերության փոխնախագահ Սյուե Բինին:

Սյուե Բինը նախարարին ծանոթացրել է ընկերության ընթացիկ գործունեությանը, կոմերցիոն շուկայում ներկայացված 5G ստանդարտի հնարավորություններին:

Հանդիպման ընթացքում Վահան Մարտիրոսյանը ներկայացրել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանում իրականացվող պետական քաղաքականությունը և ընթացիկ ծրագրերը, մասնավորապես «Խելացի քաղաք» և «Տվյալների մշակման կենտրոն» նախագծերը և դրանցում ZTE-ի մասնակցության հնարավորությունները:

Միջոցառման շրջանակներում տարբեր միջազգային կառույցների և ոլորտի առաջատար կազմակերպությունների հետ քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող, այդ թվում՝ երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր:

♦ **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Վահան Մարտիրոսյան **01.03.2018թ.**